1575985

ԿԱՐԳ
ԴՊՐՈՒԹԵԱՆ
ԸՍՏ

ԱԲԱՐՈՂՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԵԿԵՂԵՑԻՈՑ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲՆ ՂԱԶԱՐ

1911

ԿԱՐԳ
ԴՊՐՈՒԹԵԱՆ

ՇԱՐԱԿԱՆ

ՅՈՐԹԱՄ ԶԳԵՆՈՒ ՔԱՀԱՆԱՅԻՆ
ՉՀԱՆԴԵՐՁՆ

Ով ՈՐՀՈՒՐԴ խորին անհաս անսկիզբն, որ զարդարեցեր զվերին պետութիւնդ ի յառագաստն անմատոյց լուսոյն գերապանծ փառօք զգաստ հրեղինաց:

Անճառահրաշ զօրութեամբ լուսեղծեր զԱդամ պատկեր տիրական, և նազելի փառօք զգեստաւորեցեր ի դրախտն ադենի տեղի բերկրանաց:

ԱՊ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՍՍՍՐ
1 – 13 Ծանր

Զարչարանօք քո սուրբ միա-
ծնիդ նորոգեցան արարածք ամե-
նայն, և վերստին մարդն անմա-
հացաւ, զարդարեալ ի զգեստ ան-
կողոպտելի:

Անձրևածին բաժակ հրահոսան,
որ հեղար յառաքեալսն ի սուրբ
վերնատունն, հեղ և ի մեզ, Հո-
գիդ սուրբ Աստուած՝ ընդ պատ-
մուճանին զքոյ զիմաստութիւնդ:

Տան քում վայելէ սրբութիւն,
որ զգեցար զվայելչութիւն, սըր-
բութիւն փառաց ընդ մէջ քո ա-
ծեալ. պատեա զմէջս մեր ճշմար-
տութեամբ:

Որ զարարչագործ բազուկս քո
տարածեցեր ընդդէմ աստեղաց,
հաստատեա զբազուկս մեր կարո-
ղութեամբ համբարձմամբ ձեռաց
առ քեզ միշնորդել:

Խիստմամբ թագ ի գլուխ, պա-
տեսցես զմիտս և զգայարանս խա-
չանիշ ուրարամբ ըստ Ահարոնի

ծաղկեալ ոսկեթել ի զարդ խորա-
նիս:

Բամից բոլորից տիրապէս աս-
տուածպետական, նափորատապատ
սիրով զմեզ զգեստաւորեցեր քում
սուրբ խորհրդոյդ լինել սպասա-
ւոր:

Թագաւոր երկնաւոր, զեկեղե-
ցի քո անշարժ պահեա, և զերկըր-
պագուս անուանդ քում պահեա
ի խաղաղութեան:

Եւ յետ զգևլոյդ սրբուհեաւ
զգեստուցն ևկեացևի առաչի սրբոյ
սեղանոյն: Եւ քահանայն լուսա-
ցէ զձեռս: Սաղ. Ի՞նչ. Լուացից
սրբութեամբ զձեռս իմ: Սար. Գնա
արա ինձ: Տուէ առ տուէ զփոխան
ի լման: Փառք: — Այժմ:

Քահանայն:

Եւ վասն սրբուհւոյ Աստուա-
ծածնին:

Սբ֊Հ֊Ա֊Ք֊Ն։

Սուրբ զԱստուածածինն և զա֊
մենայն սուրբս բարեխօս արաս֊
ցուք առ Հայր ի յերկինս, զի կա֊
մեցեալ ողորմեսցի, և զթացեալ
կեցուսցէ զարարածս իւր։ Ամե֊
նակալ տէր Աստուած մեր կեցո
և ողորմեա։

Քահ. Ընկալ Տէր զաղաչանս։

Եւ առ. Խոստովանիմ առաջի
Աստուծոյ։

Պատասխանին որք ևերթ ևն.
Ողորմեսցի քեզ Աստուած հզօրն։

Պատասխանեսցի և. խնդրի. Ա֊
զատեսցէ և զձեզ մարդասէրն Աս֊
տուած։

Դպ. Յիշեսջիր զմեզ առաջի ան֊
մահ Գառինն Աստուծոյ։

Քահ. Յիշեալ լիջիք առաջի ան֊
մահ Գառին Աստուծոյ։

Դպէրք. աղօթս. Ղ֊Թ.

Աղաղակեցէք առ Տէր ամենայն
երկիր, ծառայեցէք Տեառն ու֊
րախութեամբ։

Մտէք առաջի նորա ցնծութեամբ.
ծաներուք զի նա է տէր Աս֊
տուած մեր։

Նա արար զմեզ, և ոչ մեք էաք.
մեք ժողովուրդք և խաշն արօ֊
տի նորա։

Մտէք ընդ դրունս նորա խոստո֊
վանութեամբ, և օրհնութեամբ
ի յարկս նորա։

Խոստովան եղերուք Տեառն, և
օրհնեցէք զանուն նորա։

Բարեր է Տէր, յաւիտեան է ողոր֊
մութիւն նորա. ազգէ մինչև
յազգ է ճշմարտութիւն նորա։

Փառք Հօր։ — Այժմ և միշտ։

Սբ֊Հ֊Ա֊Ք֊Ն։

Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք
զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի

մեղաց, և կեցուսցէ չնորհիւ ողորմութեան իւրոյ. ամենակալ տէր Աստուած մեր կեցո և ողորմեա:

Քահանայն:

Ի մէջ տաճարիս և առաջի աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս, և սուրբ տեղւոյս խոնարհեալ երկիւղիւ երկիր պագանեմք, սուրբ, զհրաշալի և զյաղթող (զյարութիւնդ) քո փառաւորեմք: Եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ Հօր և ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն.

Քահ. ապ. Խե. Մարց առաջի: Սար: Դատ արա ինձ Աստուած. տուն առ տուն զփոխեմ ի լրևաւ:

Սարկաւագն:

Օրհնեսցուք զՀայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արժանի արար զմեզ կալ ի տեղւոջ

փառաբանութեան, և երգել զերգս հոգեւորս. ամենակալ տէր Աստուած մեր կեցո և ողորմեա:

Քահանայն:

Ի յարկի սրբութեան, և ի տեղւոջ փառաբանութեան, հրեշտակաց բնակարանիս, և մարդկան քաւարանիս. առաջի աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ սեղանոյս խոնարհեալ երկիւղիւ երկիր պագանեմք, սուրբ, զհրաշալի և զյաղթող (զյարութիւնդ) քո փառաւորեմք: Եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ Հօր և ընդ սուրբ Հոգւոյդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Եւ ապա ձգեն զվարագոյրն. և դպիրքն եղանակեն մեղեդի խորհրդաւոր, կամ տաղ:

ՄԵՂԵԴԻՔ

Ա-ԵՊԵՍՑ։

Բարբառ աւետեաց ձայնիւ, կրկնե՛։
Գաբրիէլ գոչէր սրբուհւոյն։
Առ քեզ առաքիմ, մաքուր, կրկնե՛։
Պատրաստել տեղի տէրունւոյն։

Ծննդեան։

Նոր ծագիկ այսօր բղխէ յարմատոյն Յեսսեայ։
Եւ դուստր Դաւթի ծնանի զՈրդին Աստուծոյ։

Տեառնընդառաջին։

Քրիստոս փառաց թագաւորն այսօր եկեալ յընծայումն։
Կատարելով նա զօրէնս քառասնօրեայ գալստեամբ։

Ծաղկազարդին։

Աստ եբրայեցւոց մանկունքն զերգ քերովբէիցն առեալ։

Հեթանոսական դաստուց տօնակից վէհիցն եղեալ։

Յարոյեան։

Ես ձայն զառիւծուն ասեմ,
Որ գոչէր ի քառաթեւին.
Ի քառաթեւին գոչէր. կրկնե՛։
Ձայն առնէր ի սանդարամետոն. կրկնե՛։

Նոր կիրակէ։

Այսօր նոր արեւ հարեալ,
Ի նորահրաշ արեգակնէն. ի նոր բարհրաշ։
Այսօր նոր չուշան ծաղկեալ
Ի նորատունկ բուրաստանէն.

Համբարձման։

Այսօր անդրանիկ Հօր միածին Որդին։
Յերկինս սլանայ ադամային կերպիւ։

Նըւագ ներբողից եղանակեն այս-
օր:
Հոյլք հոգեղինաց երկնաւորացն
խմբից:

Հոփ-ոյ փալոփեան:

Նըւագեմք Հոգւոյն նըւագս վայե-
լուչս:
Վայելուչս բանիւ զարարչութիւնն
նախ ասեմք:

Վրթովաւուն:

Գոհար վարդն վառ առեալ. կրկնիւ:
Ի վեհից վարսիցն արփենից. կրկնիւ:
Ի վեր ի վերայ վարսիցն:
Պղպջէր ծաղիկ ծովային. կրկնիւ:

Փոխանն:

Այսօր Գաբրիէլ հրեշտակապետն
եկեալ:
Բերեալ զբաւբիոն պսակ յաղթող
կուսին:

Այսօր կոչելով առ բոլորիցըն Տէրն
Ջտաճար Բարձրելոյն և զբնակա-
բան Հոգւոյն:

Խաչէ:

Խաչն ի նախնումն երևեցաւ
Ծաղկեալ ի դրախտն աստուա-
ծատունկ,
Մխիթարիչ եղեալ Սեթայ,
Նախագուշակ հօրն Ադամայ:
Մեք ի յայն փայտն եմք յուսա-
ցեալ
Յոր տէր Յիսուս բևեռեցաւ.
Եւ խոնարհեալ երկրպագեմք
Աստուածընկալ սուրբ նշանիս:

Հրեշտակապետաց:

Գովեստ բերկրանաց քաղցրաձայ-
նեալ երգեմք:
Զեզ հրեշտակապետք, և հրեշտա-
կաց գումարք:

Աստուածոյ:

Արեգակն արդար, որ ի Հօրէ ծագեալ,
Զառաքեալսն քո անճառ շնորհօք լցեալ:
Ոահ լուսոյ ցուցեալ հայաստաւեայց ազանց,
Մեծն Թադէոս Բարթուղիմեաւ փայլեալ:

Մարտիրէից:

Աստուածային խորոցն անճառ
խորհրդածուք սուրբ մարգարէք:
Բանիւ պատմօղք զապագայիցն
Յառաջագոյն զեղելութիւնն:

Հայրապետաց:

Ի հանդէս ժօնի քոյ բախացեալ ցնծամբք,
Հայր և վարդապետ սուրբ հայրապետ Պետրոս:

Զրնտրեալն որ ասես, վեղիդի մի ասեր:

ԵՐԳ.

Ընտրեալ յԱստուածոյ, ով երջանիկ սուրբ քահանայ:
Նմանեալ Ահարոնի, և Մովսէսի մարգարէին:
Ախմ, որ զգեստուցն էր յօրինող, զոր Ահարոն միշտ զգենոյր:
Յօրինէր զպատմուճանն, զոր ի չորից կազմեալ նիւթոց:
Ի կարմրոյ, ի կապուտոյ, ի բեհեզոյ, ի ծիրանւոյ:
Թել զթելն յօրինէր, կարգն առնէին էր կարկեհան:
Եւ զօծումն զրապանին չուրջանակի բոլորաշէն:
Եւ յընթացս գարշապարին հնչէր երկիր, ցնծայր խորան:
Արդ ի նոյն նմանութեան Քրիստոս զմեր տէրս յօրինէ:

Յորժամ մտցես ի սուրբ խորանն,
անդ յիչեսցես զմեր ննջեցեալսն:
Յորժամ առնես զպատարագն յիշեա և զիս զբազմամեղս:
Զի և մեզ ողորմեսցի ի միւսանգամ իւր գալստեանն:
Չօրն փառք, Որդւոյն պատիւ, և սուրբ Հոգւոյն այժմ յաւիտեան:
Յաւիտեանս յաւիտենից Քրիստոս օրհնեալ ի համայնից:

Ի խնկարկել տահանային պղպէրն երբեմն:

Յայս յարկ նուիրանաց ուխտի Տեառն տաճարիս, ժողովեալքս աստանօր ի խորհուրդ պաշտամն պաղատանաց առաջիկայ սուրբ պատարագիս, խնկօք անուշիւք խումբ առեալ պարեմք ի վերնայարկ սրահս խորանիս: Ուղղութեամբ ընկալ զաղօթս մեր, որպէս բուրումն անուշահոտ խնկոց

1-1380 սեպ

առաքից և կինաժոնաց. և զմատուցօղքս պահեա սրբութեամբ և միշտ հանապազ քեզ սպասաւորել: Բարեխօսութեամբ մօր քոյ և կուսի, ընկալ զաղաչանս քոց պաշտօնէից:

Որ գերագոյն քան զերկինս պայծառացուցեր սուրբ զեկեղեցի առեամբ քո Քրիստոս, և ըստ երկնայնոցն կարգեցեր ի սմա զգաստ առաքելոց և մարգարէից, սուրբ վարդապետաց: Այսօր ժողովեալ դասք քահանայից, սարկաւագաց, դպրաց և կղերիկոսաց, խունկ մատուցանեմք առաջի քո Տէր, յօրինակ ըստ հնումն Զաքարիասն: Ընկալ առ ի մէնջ զխնկանուէր մաղթանս, որպէս զպատարագն Աբէլի, զՆոյի և զԱբրահամու: Բարեխօսութեամբ վերին քո զօրաց միշտ անչարժ պահեա զաթոռ հայկազնեայց:

Ահա յոյժ դուստր լուսոյ, մայր

սուրբ կաթուղիկէ մանկամբք քո Սիոն, զարգարեալ պճնեա հարսըն պանծալի երկնանման լուսաճեմ խորան: Ջի օծեալն աստուած Լննն ի յէն անծախապէս ի քեզ միշտ պատարագի. Չօր ի հաշտութիւն, մեզ ի քաւութիւն բաշխէ զմարմին և զարիւն իւր սուրբ: Վասն իւր կատարմանն սուրբ անօրէնութեանն, չնորհէ զթողութիւն կանգնողի տաճարիս: Ջանապատական կոյսն Մարիամ աստուածածին խոստովանի սուրբ եկեղեցի. ուստի տուաւ հացն անմահութեան և բաժակ մեզ ուրախարար. տուք օրհնութիւն նմա հոգևոր երգով:



Ե՞ աթիոռոքն կացեալ ի վեր պատճարքն չայնեացեք ասելով:

Օրհնեա տէր:

Ե՞ ահաձայն ի չայն ասացեք:

Օրհնեալ թագաւորութիւնն Չօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Ե՞ ակաունկին այլ եկեղեցական+ քահանայք պաշտեն առաքն:

Ե՞ չառաքեալքն երկրին տրուեցեք աթիոռոքն:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ, կեցո և ողորմեա:

Օրհնեա տէր:

Քահ. Օրհնութիւն և փառք Չօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Խաղաղութիւն ամենեցուն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քումդ:
Սար. Աստուծոյ երկրպագեսցուք:
Դպ. Առաջի քո տէր:
Քահ. Տէր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքնին է:

Ե՛ ասէ ժողովուրդն և շաբաթանն ըստ պարշաճի:

Սար. Օրհնեա տէր:
Քահ. Ձի քո է կարողութիւն:
Սար. Պատսխանեմք:

Ե՛ ասացէք ընդ+ունելեանն յայնէ՛:

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, ողորմեա մեզ:

Ե՛ աբեղաացն փարոզեսցէ:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:
Դպ. Տէր ողորմեա:
Սար. Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատու-

թեան սրբոյ եկեղեցւոյ, զՏէր աղաչեսցուք:
Դպ. Տէր ողորմեա:
Սար. Վասն ամենայն սուրբ և ուղղափառ եպիսկոպոսաց, զՏէր աղաչեսցուք:
Դպ. Տէր ողորմեա:
Սար. Վասն սրբազան Պապին մերոյ տեառն (այս անուն): Եւ Պատրիարգին, կամ Արքեպիսկոպոսին, կամ Եպիսկոպոսին մերոյ տեառն (այս անուն), զՏէր աղաչեսցուք:
Դպ. Տէր ողորմեա:
Սար. Վասն վարդապետաց, քահանայից, սարկաւագաց, գըպրոց, և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ, զՏէր աղաչեսցուք:
Դպ. Տէր ողորմեա:
Սար. Վասն բարեպաշտ թագաւորաց և աստուածասէր իշխանաց, զօրավարաց և զօրաց նոցին, զՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա:
Սար. վասն հոգւոցն հանգուցեալ-
ոց, որք ճշմարիտ և ուղիղ հա-
ւատով ի Քրիստոս ննջեցին,
զՏէր աղաչեսցուք:
Դպ. Ձիշեա Տէր և ողորմեա:
Սար. Եւ ևս և վասն միաբանու-
թեան ճշմարիտ և սուրբ հաւա-
տոյս մերոյ, զՏէր աղաչեսցուք:
Դպ. Տէր ողորմեա:
Սար. Ջանձինս մեր և զմիմեանս
տեառն Աստուծոյ ամենակալիդ
յանձն արասցուք:
Դպ. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:
Սար. Ողորմեաց մեզ տէր Աս-
տուած մեր, ըստ մեծի ողոր-
մութեան քում: Աղաչեսցուք ա-
մենեքեան միաբանութեամբ:
Դպ. Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Տէր ողորմեա:
Սար. Օրհնեա տէր:
Քահ. Ջի ողորմած և մարդասէր:

Եւ ահաւասիկ նոտքն յատենէն:

Եւ սկսցին սաղմոս. կցորդ, ըստ խորհրդոյ աւուրն: Եւ ընթերցին զգիրս մարգարէականս, և առաքելականս: Եւ զկնի ապ-
ղոյ, ըստ ցուցանելոյ ընթերցուա-
ծոյն: Եւ յաւարտուանն՝ սարկա-
ւագն բարձր ձայնիւ գոչեսցէ.

Օրթի:

Քահանայն:

Խաղաղութիւն ընդ ամենեսեան:
Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:
Սար. Երկիւղածութեամբ լուա-
րուք:
Սար. Սրբոյ աւետարանիս որ ըստ
Մատթէոսի:
Դպ. փառք քեզ տէր Աստուած
մեր:
Սար. Պռօսխումէ:
Դպ. Աստ Աստուած:

Եւ սուրբ Հոգւոյն ընդ Որդւոյ եւ ընդ Հօր փառաւորեալ եւ յաւիտեան ամենեցուն։

Փառք քեզ տէր Աստուած մեր։

Եւ սուրբ Հոգին ընդ մեզ։

Հաւատամք, ի մի Աստուած Հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի՝ երևելեաց և աներևութիից։ Եւ ի մի տէր Յիսուս Քրիստոս, Որդին Աստուծոյ. ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին նախ քան զամենայն յաւիտեանս։ Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ՝ և ոչ արարած։ Նոյն ինքն համագոյակից Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի երևելիք և անեղերևոյթք։ Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան՝ իջեալ ի յերկինից, մարմնացաւ՝

մարդացաւ, ծնաւ կատարեալապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւով սրբով։ Որով էառ մարմին, հոգի, և միտք, և զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք։ Զարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ ելեալ ի յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ Հօր։ Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր՝ ի դատել զկենդանիս և զմեռեալս. որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։ Հաւատամք և ի սուրբ Հոգին՝ յանեղն և ի կատարեալն, որ ի Հօրէ և յՈրդւոյ բղխի։ Որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս։ Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զԱռաքեալսն, և բնակեցաւ ի սուրբսն։ Հաւատամք և ի մի միայն ընդհանրական և առաքելական եկեղեցի։ Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն ի քաւութիւն և ի թո-

զութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց: Ի զատաստանսն յաւիտենից՝ հոգւոց և մարմնոց: Յարքայութիւն երկնից՝ և ի կեանսն յաւիտենականս:

Իսկ որք ասենն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր Որդի, կամ էր երբեմն, յորժամ ոչ էր սուրբ Հոգին: Կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ, և կամ զՍուրբ Հոգին: Եւ թէ փոփոխելի են՝ կամ այլայլելի, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի:

Սար. Օրհնեա տէր:

Քահ. իսկ մեք փառաւորեսցուք:

Սար. Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա:

Ս ր կ ա ց ն:

Եւ ևս հաւատով աղաչեսցուք և խնդրեսցուք ի տեառնէ Աստուծոյ և ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիս-

տոսէ՝ ի ժամուս պաշտաման և աղօթից: Չի արժանի ընդունելութեան արասցէ, լուիցէ ձայնի աղաչանաց մերոց. ընկալցի զխընդրուածս սրտից մերոց, թողցէ զյանցանսս մեր. ողորմեսցի ի վերայ մեր: Աղօթք մեր և խնդրուածք յամենայն ժամ մացեն առաջի մեծի տէրութեան նորա: Եւ նա տացէ մեզ միաբան միով հաւատով, արդարութեամբ վաստակել ի գործս բարիս: Չի զողորմութեան գչնորհսն իւր արասցէ ի վերայ մեր: Տէրն ամենակալ կեցուսցէ, և ողորմեսցի:

Դպ. Կեցո Տէր:

Սար. Չժամ սուրբ պատարագիս, և զառաչիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել, հաւատով ի Տեառնէ խնդրեսցուք:

Դպ. Շնորհեա Տէր:

Սար. Չհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք:

Դպ. Շնորհեա Տէր:
Սար. Ջքաւութիւն և զթողութիւն յանցանաց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք:
Դպ. Շնորհեա Տէր:
Սար. Ջսրբոյ խաչին մեծ և կարող զօրութիւնն յօգնականութիւն անձանց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք:
Դպ. Շնորհեա Տէր:
Սար. Եւ ևս և վասն միաբանութեան ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ, զՏէր աղաչեսցուք:
Դպ. Տէր ողորմեա:
Սար. Զանձինս մեր և զմիմեանս տեառն Աստուծոյ ամենակալիդ յանձն արասցուք:
Դպ. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:
Սար. Ողորմեաց մեզ տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քումմ: Աւսասցուք ամենեքեան միաբանութեամբ:
Դպ. Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Սար. Օրհնեա տէր:
Քահ. Որպէս զի արժանաւորք: խաղաղութիւն ամենեցուն:
Դպ. Եւ ընդ հոգւոյդ քումմ:
Սար. Աստուծոյ երկրպագեսցուք:
Դպ. Առաջի քո տէր:
Քահ. Խաղաղութեամբ քով Քրիստոս:
Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիստոս:
Դպ. Ամէն:
Սար. Օրհնեա տէր:
Քահ. Տէր Աստուած օրհնեսցէ զամենեսեանդ:
Սար. Մի ոք յերեխայից, մի ոք ի թերահաւատից, և մի ոք յապաշխարողաց և յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդն:

Դպէր եղանակեսցեն:

Մարմին տէրունական, և արիւն փրկչական կացցէ առաջի: եր-

կնային զօրութիւնքն յանեւևոյթս երգեն և ասեն անհանգիստ բարբառով, սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց։

Սար. Սաղմոս ասացէք տեառն Աստուծոյ մերոյ, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգեւոր։

Եւ դպիրքն եղանակեն ըստ ժողովրդոյ ասելոյն։

Ծննդեան, Աւետեաց, Աստուածայնի։

Բազմութիւնք հրեշտակաց, և զօրաց երկնաւորաց իջեալ ի յերկինից ընդ միածին Թագաւորին։ Որք երգէին և ասէին՝, սա է Որդին Աստուծոյ։ Ամենեքեան ասացուք, ուրախ լերուք երկինք, և ցնծասցեն հիմունք աշխարհի. զի Աս-

տուածն յաւիտենական ի յերկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ, զի կեցուսցէ զանձինս մեր։

Մեծի Հինգշաբթի։

Որ վերանստիս ի կառս հրանիւթս քառակերպեանս անճառելի բանդ Աստուած։ Աւսօր իջեալ ի յերկնայնոցն վասն քո արարածոցս, յանձն առեր բազմիլ ընդ աշակերտս։ Եւ սերովբէքն և քերովբէքն հիացեալ զարմանային. և պետութիւնքն վերին զօրացն սքանչացեալ աղաղակէին ասելով, սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց։

Յինանցն։

Ո՞վ է որպէս տէր Աստուած մեր, խաչեցաւ վասն մեր, թաղեցաւ, և յարեաւ, հաւատարիմ եղև աշխարհի, և համբարձաւ փառօք։

Եկայք ժողովուրդք, զօրհնութիւնս ընդ հրեշտակս երգեսցուք նմա ասելով, սուրբ, սուրբ, սուրբ, տէր Աստուած մեր:

Կէրակէ, Եկեղեցոյ, Հրեշտակաց:

Հրեշտակային կարգաւորութեամբ լցեր Աստուած զքո սուրբ զեկեղեցի: Հազարք հազարաց հրեշտակապետք կան առաջի քո, և բիւրք բիւրոց հրեշտակք պաշտեն զքեզ Տէր: Եւ ի մարդկանէ հաճեցար ընդունել զօրհնութիւնս ձայնիւ խորհրդականաւ, սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց:

Մաթէոսեայ:

Սրբութիւն սրբոց՝ մեծ ես և ահաւոր, և զինաւորութիւնք հրեշտակաց օրհնեն զքեզ, և ասեն, փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն:

Պահոց Ընկեցելոց:

Վասն յիշատակի հանգուցեալոցն ընկալ Հայր սուրբ մարդասէր զպատարագս, և համարեա գհոգիս նոցա ի թիւ սրբոց քոց՝ յարքայութեանդ երկնից: Մանաւանդ զի հաւատով մատուսցուք զպատարագս, հաշտեսցի աստուածութիւնդ, և հանգուսցէ զհոգիս նոցա:

Մաթէոսեայ, Ա-ոաքելոց, Հայրապետաց:

Ամենակալ ես Տէր զօրութեանց, որ թագաւոր ես յաւիտենից, որ նստիսդ յերկնից ի յերկինս, և լոյս ծագես յարարածս քո:

Որ խոնարհութեամբ իջեր ի յերկիր, քեզ պատարագս մատուցանեմք: Եւ սուրբ զինունդ քո փառաւորեմք Տէր որ պսակիչդ ես քոց սրբոց առաքելոց: Վասն զի սքա են մեզ բարեխոս Տէր ամենակալ, ի քում արքայութեանդ:

Ե՞ր սարկաւագացն վերաբերեցէ սբա-
բաման հացն, և օրհնութիւնան քա-
հանային ի սուրբ սեղանն:

Կ Ա. Բ Գ
ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ

Թէ հանդիսաւոր օր լինի և վերա-
հուրդն վերաբերել կոչեցէ այս է
արարողութիւնն. յորժամ քահանայն
ասէ.

Տէր Աստուած օրհնեսցէ զամենես-
սեան:

Սար. Ամէնս ասացէք Տեառն:

Ե՞ր պղէրդն երբեմն վերաբաժա-
նութիւնն ըստ խորհրդոյ սուրբն՝
կանգնելոյ:

Սար. Մի ոք յերախայից:
Դպ. Մարմին տէրունական, և այլն:

Ե՞ր գան խնկարկելով ի խորհուրդն:

Սար. Յարեւու եհար զխորան իւր.

և ինքն որպէս փեսայ զի ելանէ
յառագաստէ իւրմէ.
Դպ. Եւ ցնծայ նա որպէս հսկայ
յընթանալ զճանապարհս իւր:
Սար. Որք գքրովբէիցն
Դպ. Խորհրդաբար կերպարանիմք:

Ե՞ր գան յաթևելէից կողմն:

Սար. Ձանապարհ արարէք այն-
միկ, որ նստի յերկնից յեր-
կինս ընդ արևելս:
Դպ. Եւ կենդանարար երրորդու-
թեանն զերեքսրբեան օրհնու-
թիւնս մատուցանեմք:

Ե՞ր գան ի հարաւակողմն:

Սար. Աստուած ի հարաւոյ եկես-
ցէ. և սուրբն ի փառան լեռնէ:
Դպ. Ձամենայն զկենցաղականս ի
բաց դնելով զգործս:

Ե՛ք ձեռ յաստիճան խոնարհին, և բարյաւղ խոնարհութեան ասացէք հանդերձաբոլորեալքն՝

Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր, համբարձցին դրունք յաւիտենից, և մտցէ թագաւոր փառաց:

Ե՛ պապասքեղն ընկալցի և հաբցանէ:

Ո՞վ է սա թագաւոր փառաց. տէր հզօր զօրութեամբ իւրով, տէր կարող ի պատերազմի:

Դպ. Որպէս զի զթագաւորն ամենեցուն ընդունիցիմք:

Սար. *Համբարձէք իշխանք. և այլն:*

Քահ. *Ո՞վ է սա թագաւոր փառաց և տէր զօրութեանց:*

Դպ. Եւ զհրեշտակացն հանդիսապէս ընծայեալ բերեմք զկարգ:

Սար. *Սա ինքն է թագաւոր փառաց:*

Ե՛ պապասքեղն առնու ի ձեռաց սարկաւագին՝ և խաչակնքէ ի վերայ ժողովրդեանն՝ ասելով:

Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Դպ. Ալէլուիայ:

Սար. Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա:

Սարկաւագն:

Եւ ևս հաւատով և սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ ահիւ: Մի խղճիւ և գայթակղութեամբ, մի նենգութեամբ, խորամանկութեամբ, մի պատրանօք և խաբէութեամբ, մի երկմտութեամբ, և մի թերահաւատութեամբ: Այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով,

լըցեալ սիրով, լի և առաւելեալ ամենայն գործովք, բարութեան։ Կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ, և զոցուք զողորմութեան զչնորհս, յաւուր յայտնութեան և ի միւսանգամ գալստեան Տեառն մերոյ և փըրկչին Յիսուսի Քրիստոսի, կեցուսցէ և ողորմեսցի։

Դպ. Կեցո Տէր, և ողորմեա։

Սար. Օրհնեա տէր։

Քահ. Շնորհօք և մարդասիրութեամբ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Դպ. Ամէն։ Եւ ընդ հոգւոյդ քում։

Սար. Աստուծոյ երկրպագեսցուք։

Դպ. Առաջի քո տէր։

Աբխաւաքն։

Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան, և որք ոչ էք կարողք հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ գրունս ելէք, և աղօթեցէք։

Ես համբուրեացըն զսէրդանն, և զիմիանս։

Դպ. Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ,
Որ էնն Աստուած աստ բազմեցաւ։
Խաղաղութեան ձայն հնչեցաւ,
Աւրք ողջունիս հրաման տուաւ,
Թշնամութիւնըն հեռացաւ,
Սէրն ընդ հանուրս սփռեցաւ։
Արդ պաշտօնեայք բարձեալ զձայն
Տուք օրհնութիւն ի մի բերան,
Միաստնական Աստուածութեանն,
Որում սրովբէքն են սրբաբան։

Ոմանք և պայս ասէն ի հանդիսիկ պոնէ։

Սար. Ողք հաւատով կայք յանդիման

Սուրբ սեղանոյս արքայական,
Տեսէք բազմեալ զԲրիստոս աբ-
քային,
եւ չուրջ պատեալ զօրք վերնական:
Դպ. Վերհամբարձեալ զաչս ու-
նելով,
եւ պաղատիմք զայս ասելով,
Զմեզս մեր մի յիշեսցես,
Այլ զթութեամբ քո քաւեսցես:
Ընդ հրեշտակացն օրհնեմք զքեզ,
եւ ընդ սրբոց Տէր փառք քեզ:
Սար. Ահիւ կացցուք, երկիւղիւ
կացցուք, բարւոք կացցուք, և
նայեցարուք զգուշութեամբ:
Դպ. Առ քեզ Աստուած:
Սար. Պատարագ Քրիստոս մատչի
գառն Աստուծոյ:
Դպ. Ողորմութիւն և խաղաղու-
թիւն և պատարագ օրհնու-
թեան:
Սար. Օրհնեա տէր:
Քահ. Շնորհք, սէր:
Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սար. Զգրուսնս, զգրուսնս ամենայն
իմաստութեամբ և զգուշու-
թեամբ: Ի վեր ընծայեցուցէք
զմիտս ձեր աստուածային եր-
կիւղիւ:
Դպ. Ունիմք առ քեզ Տէր ամե-
նակալ:
Սար. Եւ գոհացարուք զՏեառնէ
բոլորով սրտիւ:
Դպ. Արժան և իրաւ:
Սար. Օրհնեա տէր:
Քահ. Եւ ընդ սերովբէսն:
Դպ. Սուրբ սուրբ սուրբ Տէր զօ-
րութեանց, լի են երկինք և եր-
կիր փառօք քո, օրհնութիւն ի
բարձունս: Օրհնեալ որ եկիր և
գալոց ես անուամբ Տեառն. ով-
սաննայ ի բարձունս:

Իսկ ի հանդիսի աւուրս ոմանք
զկնի Արժան և իրաւին ասեն զայս:

Սար. Եւ զստոյգ փրկութեան՝ որ

միշտ ընդ ամենայն տեղիս գոհու-
թիւն մատուցանեմք քեզ Քրիս-
տոս: Որով և գհրաշալի գյարու-
թիւնդ քո գովեն զօրութիւնք.
սարսին սերովբէք, և դողան քե-
րովբէքն, և իշխանութիւնք վե-
րին պետութեանցն պար առեալ
ձայնիւ եղանակեն և ասեն:

Սար. Օրհնեա տէր:

Քահ. Առէք կերայք:

Դպ. Ամէն:

Սար. Օրհնեա տէր:

Քահ. Արբէք ի սմանէ:

Դպ. Ամէն: *Հայր երկնաւոր, որ*
զՈրդիդ քո եառուր ի մահ վասն
մեր պարտապան պարտեաց մե-
րոց: Հեզմամբ արեան նորա՝ ա-
զաչեմք գքեզ, ողորմեա քո բա-
նաւոր հօտիս:

Սար. Օրհնեա տէր:

Քահ. Եւ գքոյս ի քոյոցս:

Դպ. *Յամենայնի օրհնեալ ես Տէր,*
օրհնեմք գքեզ, գովեմք գքեզ,

գոհանամք գքէն, աղաչեմք գքեզ,
տէր Աստուած մեր:

Սար. Օրհնեա տէր:

Քահ. Խաղաղութիւն ամենեցուն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քոմ:

Սար. Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպ. *Առաջի քո տէր: Որդի Աստու-*
ծոյ, որ պատարագեալ Հօր ի
հաշտութիւն, հաց կենաց բաշ-
խիս ի մեզ, հեզմամբ արեան քոյ
սուրբ աղաչեմք գքեզ, ողորմեա
արեամբ քո փրկեալ հօտի:

Սար. Օրհնեա տէր:

Քահ. Որպէս զի եղիցի:

Դպ. *Հոգի Աստուծոյ, որ զփառակ-*
ցի քո խորհուրդ իջեալ ի յեր-
կնից կատարես ի ձեռս մեր, հեզ-
մամբ արեան սորա, աղաչեմք
գքեզ՝ հանգո զհոգիս մեր ննջե-
ցելոցն:

Սար. Օրհնեա տէր:

Քահ. Ընդ որս և մեզ այլ:

Դպ. *Յիշեա Տէր և ողորմեա:*

Քահ. Աստուածածնին սրբոյ կու-
սին:
Դպ. Յիշեա տէր և ողորմեա:

Աբէլաւաքն յաղէկողմն սեղանոյն՝
յետնամասն ասացէ:

Առաքելոց սրբոց, մարգարէից,
վարդապետաց, մարտիրոսաց, և
ամենայն հայրապետաց սրբոց, ա-
ռաքելագործ եպիսկոպոսաց, երի-
ցանց, ուղղափառ սարկաւագաց,
և ամենայն սրբոց, եղիցի յիշատակ
ի սուրբ պատարագս աղաչեմք:
Դպ. Յիշեա Տէր և ողորմեա:

Յաբրահամեան կէրակէից ղայս ասա:

Սար. Օրհնեալ, գովեալ, և փառա-
ւորեալ, հրաշալի և աստուա-
ձարդ (յարութեանն) Քրիստոսի
երկիրպագանեմք:

Դպ. Փառք (յարութեան) քոյ Տէր:

Ի ժամէ սբ[illegible] ղայս ասա:

Սար. Սուրբ և աստուածահաճոյ
մարգարէին, կամ հայրապետին,
կամ առաքելոյն, կամ մարտի-
րոսին, (այս անուն.) որոյ այսօր
գյիշատակն կատարեցաք, եղիցի
յիշատակ ի սուրբ պատարագս
աղաչեմք:
Դպ. Յիշեա Տէր և ողորմեա:
Սար. Առաջնորդացն մերոց, և առա-
ջին լուսաւորչացն սրբոց, Թա-
դէոսի, և Բարդուղիմէոսի առա-
քելոցն, և Գրիգորի լուսաւորչին,
Աբիստակիսի, Վրթանիսի, Յուս-
կանն, Գրիգորիսի, Ներսիսի,
Սահակայ, Դանիէլի, և Խաթայ,
Մեսրոպայ վարդապետին, և
Գրիգորի նարեկացւոյն, և Ներ-
սիսի կլայեցւոյն, և Ներսիսի
լամբրոնացւոյն, և ամենայն
սրբոց հովուաց, և հովուապե-
տացն հայաստանեայց, եղիցի

յիշատակ ի սուրբ պատարագս աղաչեմք:

Դպ. Յիշեա Տէր և ողորմեա:

Սար. Մխանձնացելոց սրբոց, առաքինասէր և աստուածուսոյց կըրօնաւորացն Պօղոսի, Անտոնի, Պօղայ, Մակարայ, Ոնոփրիոսի, աբբայ Մարկոսի, Սրապիոնի, Նեղոսի, Աբսենի, Եւագրի, Յոհաննիսեանց, և Սիմէոնեանց, սրբոց Ոսկեանց, և Սուքիասանց, և ամենայն սրբոց հարց, և աշակերտելոց նոցին ընդ տիեզերս եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս աղաչեմք:

Դպ. Յիշեա Տէր և ողորմեա:

Սար. Թագաւորաց հաւատացելոց սրբոց, Աբգարու, Կոստանդիանոսի, Տրդատայ, և Թէոդոսի, և ամենայն սրբոց և բարեպաշտ թագաւորաց, և աստուածասէր իշխանաց, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս աղաչեմք:

Դպ. Յիշեա Տէր և ողորմեա:

Սար. Ընդհանուր ամենայն հաւատացելոց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, և ամենայն չափու հասակի հաւատով և սրբութեամբ ի Քրիստոս ննջեցեալոց, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս աղաչեմք:

Դպ. Յիշեա Տէր և ողորմեա:

Սար. Օրհնեա տէր:

Քահ. Եւս առաւել զսրբազան պապլն մեր:

Եւ ապա է յախտիպողն սեղանոյն փարոզեսցէ սարկաւագն յԼուկ ասլիթէոյ: Զոր ի ոտ ծագացեալն կոթեալ շրջեսցէ, զի ժեժին խոտորվոր եւ սասցեալ զատաղնոց օրինացն:

Գոհութիւն և փառաբանութիւն մատուցանեմք քեզ տէր Աստուած մեր, վասն սուրբ և անմահ պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղանոյս: Զի զսա մեզ ի սրբութիւն կենդանութեան պարգևեսցես: Սո-

վաւ. Շնորհեա զսէր, զհաստատու-
թիւն և զըղձալի զխաղաղութիւն
ամենայն աշխարհի, սրբոյ եկե-
ղեցւոյ, և ամենայն ուղղափառ
եպիսկոպոսաց: Եւս առաւել սրբա-
զան Պապին մերոյ տեառն (այս
անուն): Եւ պատուական Պա-
տրիարգին մերոյ, կամ Արհիե-
պիսկոպոսին, կամ Եպիսկոպոսին
տեառն այս անուն: Եւ քահա-
նայիս, որ զպատարագս մատու-
ցանէ: Եւ վասն զօրութեան և
յաղթութեան թագաւորաց քրիս-
տոնէից, և իշխանացն բարեպաշ-
տից: Աղաչեսցուք և խնդրեսցուք
և վասն հոգւոցն հանգուցելոց: Եւս
առաւել վասն հանգուցեալ բարե-
նպաստացն մերոց, և չինողաց
սուրբ եկեղեցւոյս, և որք ընդ հո-
վանեաւ սորին են հանգուցեալ: Ա-
զատութիւն եղբարց մերոց գերե-
լոց, և չնորհ առաջիկայ ժողովըր-
դեանս: Չանգիստ հաւատով և սըր-

բութեամբ ի Քրիստոս կատարելո-
ցըն: Եղիցի յիշատակ ի սուրբ
պատարագս աղաչեմք:

Դպ. Ըստ ամենայնի և յաղագս ա-
մենեցուն:

Ար. Օրհնեա տէր:

Քան. Եւ եղիցի ողորմութիւն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քումմ:

Ե֊ ոբիւ֊ա֊ֆն ֆ֊բ֊ղէ է ըէ֊:

Եւ ևս խաղաղութեան զՏէր ա-
ղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա:

Ար. Ամենայն սրբովք զորս յի-
շատակեցաք, ևս առաւելապէս
զՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա:

Ար. Վասն մատուցեալ սուրբ և
աստուածային պատարագիս, որ
ի վերայ սրբոյ սեղանոյս, զՏէր
աղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա:

Ար. Որպէս զի տէր Աստուած մեր

որ ընկալաւ զսա ի սուրբ յեր-
կնային և յիմանալի իւր մատու-
ցարանն, և զփոխանակն առա-
քեսցէ առ մեզ զՆոյնոհս և զպար-
գևս Հոգւոյն սրբոյ, զՏէր աղա-
չեսցուք:

Դպ. Տէր ողորմեա:

Սար. Ընկալ, կեցո, և ողորմեա,
պահեա զմեզ Տէր քոյին Նոյնիս-
ւըդ:

Դպ. Կեցո Տէր ողորմեա:

Սար. Ձամենասրբուհի զԱստուա-
ծածինն, զմիշտ կոյսն Մարիամ,
հանդերձ ամենայն սրբովք յիշե-
լով, զՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա:

Սար. Եւ ևս և վասն միաբանու-
թեան ճշմարիտ և սուրբ հաւա-
տոյս մերոյ զՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա:

Սար. Ձանձինս մեր և զմիմեանս
տեառն Աստուծոյ ամենակալին
յանձն արասցուք:

Դպ. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Սար. Ողորմեաց մեզ տէր Աստուած
մեր ըստ մեծի ողորմութեան
քոյ: Աւասցուք ամենեքեան
միաբանութեամբ:

Դպ. Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Տէր ողորմեա:

Սար. Օրհնեա տէր:

Քահ. Եւ տուր մեզ:

Եւ դպիրն բարձրաձայն
ընդունելեացն:

Հայր մեր որ յերկինսդ ես, սուրբ
եղիցի անուն քո, եկեսցէ արքա-
յութիւն քո, եղիցին կամք քո,
որպէս յերկինս և յերկրի. զհաց
մեր հանապազորդ տուր մեզ այս-
օր, և թող մեզ զպարտիս մեր,
որպէս և մեք թողումք մերոց պար-
տապանաց, և մի տանիր զմեզ ի
փորձութիւն. այլ փրկեա ի չարէ:

Սար. Օրհնեա տէր:

Քահ. Ձի քոյ է արքայութիւն:

Խաղաղութիւն ամենեցուն:
Դպ. Եւ ընդ հոգւոյդ քումմ:
Սար. Աստուծոյ երկրպագեսցուք:
Դպ. Առաջի քո տէր:

Քահանայն խոնարհի և ամենայն ժողովրդեանն խոնարհին ի վայր. և ասէ ածաւաքն յայնմ:

Օրհնեա տէր:
Քահ. Քրիստոսիւ Յիսուսիւ տեառնմբ մերով:

Եւ ասէ ածաւաքն յայնմ բառիւք:

Պօսխումէ:
Քահ. Ի սրբութիւն սրբոց:
Դպ. Միայն սուրբ, միայն տէր, Յիսուս Քրիստոս, ի փառս Աստուծոյ Հօր. Ամէն:
Սար. Օրհնեա տէր:
Քահ. Օրհնեալ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ:
Դպ. Ամէն:
Սար. Օրհնեա տէր:

Քահ. Օրհնեալ Որդիդ սուրբ Աստուած ճշմարիտ:
Դպ. Ամէն:
Սար. Օրհնեա տէր:
Քահ. Օրհնեալ Հոգիդ սուրբ Աստուած ճշմարիտ:
Դպ. Ամէն:
Սար. Օրհնեա տէր:
Քահ. Օրհնութիւն և փառք:
Դպ. Ամէն: Հայր սուրբ, Որդիդ սուրբ, Հոգիդ սուրբ: Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն: Այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:
Սար. Օրհնեա տէր:
Քահ. Ի սուրբ սուրբ պատուականն:

Եւ խոչակնէ տահանայն սկսեալ ի վերայ ժողովրդեանն, և պատանայ ի սոքա սեղանն, և տարչէն զվարագոյրն, և տարուղէ ածաւաքն բառիւք:

Աղաչեմս ասացէք տեառն Աստուծոյ մերոյ զպիտք ձայնիւ քաղցրու-

թեան զերգս հոգևորս: Զի սմա վայելեն սաղմոսք, և օրհնութիւնք, ալէլուք և երգք հոգևորք: Պաշտօնեայք հանդերձ երգով սաղմոս ասացէք. և զՏէր յերկինս օրհնեցէք:

Դ՚ղէր+ եղանակեն:

Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում. Ալէլուիա:
Զմարմին իւր առյ մեզ կերակուր, և սուրբ զարիւն իւր ցօղէ ի մեզ. Ալէլուիա:
Մատիք առ Տէր և առէք զլոյս. Ալէլուիա:
Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է Տէր. Ալէլուիա:
Օրհնեցէք զՏէր յերկինս. Ալէլ:
Օրհնեցէք զնա ի բարձունս. Ալէլ:
Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա. Ալէլուիա:
Օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա. Ալէլուիա:

Երէո՚շաբթի:

Լոյս ճշմարիտ և ճառագայթ Հօր, ծագումն և կնիք, բան և ծնունդ: Որ կանգնեցեր յեօթանց սեանց զեկեղեցի սուրբ, ածեալ ի սպանդ զեզն պարարակ: Շնորհեա մեզ կերակրիլ յիմաստութեան սեղանոյ քում: Ողորմեա:

Երե+շաբթի:

Հաց կենաց և անմահութեան ճաշակ, սուրբ և անճառ սոսկալի խորհուրդ: Որ ի յերկնից իջեր կենդանութիւն մարդկան, կենդանի և կենդանարար: Պարգևեա քաղցելոցս զքաղցրութեան քում ճաշակումն: Ողորմեա:

Չո՚րե+շաբթի:

Դուռն երկնից, և ճանապարհ արքայութեան, տէր երկնի, ի յեր-

կնայնոցն օրհնեալ դասուց: Որ ըզմարմին քո և զարիւնդ անապական բաչխեցեր առաքելոցն: Մաքրեա զմեզ հաղորդիլ սրբութեան քում խորհրդոյ: Ողորմեա:

Հինգշաբթի:

Բան Հօր և քահանայապետ սուրբ, յանմարմնոցն գովեալ ի բարձունս: Որ ի վերայ խաչին պատարագեալ մարմնով հեղեր զարիւնդ ի փրկութիւն: Սրբեա զմեզս մեր կենարար և փրկական քաւիչ քո արեամբդ: Ողորմեա:

Ուրբաթ:

Վէմ հոգևոր և գլուխ անկեան օծեալ, բարեբանեալ ի հրեշտակաց: Որ ի խաչին բացեր զկողահոս աղբիւրդ, զանմահութիւն ցօղեալ տիեզերաց: Սրբո և մեզ ծարաւեացս զբաժակ քո փրկութեան: Ողորմեա:

Շաբաթ:

Գառն Աստուծոյ զենեալ միշտ, և կենդանի, անմեղ եկեալ ի պատարագս: Որ ի հաշտութիւն Հօր պատարագեալ բառնաս զմեզս աշխարհի, յանմահից զօրաց փառաւորեալ: Ձիշտս զհոգիս հաւատով ի քեզ ննջեցելոցն մերոց: Ողորմեա:

Եւ ժողովեն զվարդապետն յԵփ: Եւ ընկ առաքեալքն կայցէ, հաղորդեսցի և նա: Եւ առցէ առաքեալքն զընծայսն, և դնեսցէ առ Տեղովուրդն սեղանով բոյնյ:

երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք, և սրբութեամբ հաղորդեցարուք.

Ժողովուրդն ասէն բոլոյն Տեառն:

Աստուած մեր և տէր մեր երևեցաւ մեզ: Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Եւ հաղորդեսցէ նոր յերանելոցն. բայց ոչ է բնաւին, այլ է յոմին պարով ընդունի: Եւ ահաւասիկ աբժանաւոր ժողովուրդն հաղորդեցին: Եւ յետ հաղորդելոյն խաչին[եցաւ] ահանայն ժողովուրդն, եւ ասացեալ բաւիղ:

Կեցո Տէր ✠ զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւնս քո, հովուեա և բարձրացո զսոսա յայսմհետէ մինչև յաւիտեան:

Պարշնալ ահաչն զվարքեցոյն, եւ պղէրդն երգեն:

Լցաք ի բարութեանց քոց Տէր, ճաշակելով զմարմին քո և զարիւն, փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ: Որ հանապազ կեբակրես զմեզ, առաքեա ի մեզ զհոգևոր քո զօրհնութիւն: Փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ:

Սարկաւագն:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Եւ ևս հաւատով ընկալեալք յաստուածային, սուրբ, յերկնային, յանմահ, յանարատ և յանապական խորհրդոյս, զՏեառնէ գոհացարուք:

Պղէրդն:

Գոհանամք զքէն Տէր, որ կերակրեցեր զմեզ, յանմահական սեղանոյ քո: Խաչելով զմարմին և զարիւնդ ի փրկութիւն աշխարհի, և կեանք անձանց մերոց:

Իսկ ասպանօք պղէրդն չեղանակեն պաղ խորհրդաւորս, զինչև [ա]հանայն կատարեցեալ զկարքն աղօթեցեն: Եւ ապա ասէ սարկաւագն:

Օրհնեա տէր:

Եւ [ա]հանայն ասացէ զաւետարանն սուրբ է Յեսու Քրս, և երէցպետեալ

համբուրեցէք զեկեղեցին: Եւ երթալ
ի վեր երկեղեցւոյն ասացէք զաղօթս
ի հայն:

Որ օրհնես զայնոսիկ:

Եւ դպիրն ասացէն երեք անգամ:

Եղիցի անուն Տեառն օրհնեալ
յայսմհետէ մինչև յաւիտեան:
Քահ. կատարումն օրինաց:
Սար. Օրթի:
Քահ. Խաղաղութիւն ✠ ամենե-
ցուն:
Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:
Սար. Երկիւղածութեամբ լուա-
րուք:
Քահ. Սրբոյ աւետարանիս որ ըստ
Յովհաննու:
Դպ. Փառք քեզ տէր Աստուած մեր:
Սար. Պռօսխումէ:
Դպ. Ասէ Աստուած:

Քահ. Ի սկզբանէ: Էակ ի յի-
նուհետև, եւ իբրև ճաշեցին. և
այլն:
Դպ. Փառք քեզ տէր Աստուած մեր:

Սարկաւագն:

Սուրբ խաչիս աղաչեսցուք զո-
Տէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի
մեղաց. և կեցուսցէ հնորհիւ ողոր-
մութեան իւրոյ: Ամենակալ տէր
Աստուած մեր կեցո և ողորմեա:

Քահանայն:

Տէր ողորմեա. Տէր ողորմեա.
Տէր ողորմեա: Պահպանեա զմեզ
Քրիստոս Աստուած մեր ընդ հո-
վանեաւ սուրբ և պատուական խա-
չի քոյ ի խաղաղութեան. փրկեա
յերևելի և յաներևոյթ թշնամւոյն:
Արժանաւորեա զհոգութեամբ փա-
ռաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սուրբ

Հոգւոյդ: Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Դպէրքն:

Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ:

Եւ դահանայն խաչակնքեսցէ զժողովուրդն, և ասասցէ բաղձալ:

Օրհնեալք ✠ եղերուք ի շնորհաց սուրբ Հոգւոյն, երթայք խաղաղութեամբ. և Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ. Ամէն:

Եւ է բաշխեցն զհաւատս առ ժողովուրդան երբեմն զասացոմս Լ:

Ի Տէր պարծեսցի անձն իմ. լուիցեն հեզք և ուրախ եղիցին:

Մեծ արարէք զՏէր ինձ. և բարձր արասցուք զանուն նորա ի միասին:

Խնդրեցի ի Տեառնէ և լուաւ ինձ. յամենայն նեղութենէ իմմէ փրկեաց զիս:

Մատիք առ Տէր և առէք զլոյս, և երեսք ձեր մի՛ ամաչեսցեն:

Այս աղքատ կարդաց առ Տէր և Տէր լուաւ սմա. յամենայն նեղութենէ սորա փրկեաց զսա:

Բանակ հրեշտակաց Տեառն չուրջ է զերկիւղածսն և իւրովք և պահէ զնոսա:

Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է Տէր. երանեալ է այր որ յուսայ ի նա:

Երկերուք ի Տեառնէ ամենայն սուրբքդ նորա, զի ոչ ինչ է պակասութիւն երկիւղածաց նորա:

Մեծամեծք աղքատացան և քաղցեան. բայց որք խնդրեն զՏէր, մի պակասեսցէ ի նոցանէ ամենայն բարութիւն:

Եկայք որդեակք իմ և լուարուք ինձ. և զերկիւղ Տեառն ուսուցից ձեզ։

Ո՛վ է մարդ որ կամի զկեանս. սիրէ զաւուրս իւր տեսանել ի բարութեան։

Լռեցո զլեզու քո ի չարութենէ. և շրթունք քո մի խօսեսցին ըզ-նենգութիւն։

Խոտորեա ի չարէ և արա զբարի. խնդրեա զխաղաղութիւն և երթ զհետ նորա։

Աչք Տեառն ի վերայ արդարոց. և ականջք նորա ի վերայ աղօթից նոցա։

Երեսք Տեառն ի վերայ չարագործ-ծաց սատակել յերկրէ զյիշա-տակս նոցա։

Կարդացին արդարքն առ Տէր՝ և Տէր լուաւ նոցա. յամենայն նե-զութենէ նոցա փրկեաց զնոսա։

Մերձ է Տէր առ այնոսիկ որ մա-շեալ են սրտիւք. և զխոնարհս հոգւով կեցուցանէ։

Բազում նեղութիւնք են արդարոց յամենայնէ փրկէ զնոսա Տէր. և պահէ զամենայն ոսկերս նոցա. և մի ի նոցանէ մի փշրեսցի։

Մահ մեղաւորին չար է. բայց որ ատեայ զարդարն՝ զղջասցի։

Փրկէ Տէր զանձինս ծառայից իւ-րոց. մի զղջասցին ամենեքեան որք յուսացեալ են ի նա։

Փառք Հօր։ — Այժմ և միշտ։

ԺԱՄԱՄՈՒՏՔ

Ըստ կարգի ատենից, ժամից երեքումնափառաց, և ամենայն սրբոց:

Պահոց:

Որ ի չօրէ առաքեցար փրկիչ՝ և մարմնացար ի սուրբ Կուսէն. որ վասն մեր ի յերկինից իջեր՝ և լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր. զխաղաղութիւն և զողորմութիւն. որ յամենայնի ես դու կարող՝ մարդասէր:

Զարեւշաբաթու և Ուրբաթու:

Որ ըստ ամենայն միտս անցաներես, զխաղաղութիւն քո Աստուած՝ տուր մեզ հանապազ զքեզ աղաչեմք:

Մարգարէից:

Ի տաճարի սրբոց, և յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա և աղօթիւք զկեանդանութիւնս մեր խաղաղացո Աստուած, որպէս մարդասէր:

Ճգնաւորաց:

Ճգնաւորք Քրիստոսի, որք տանջանաց անօրինաց համբերեցիք. և զմոլութիւն կռոցն խափանեցիք, դասաւորեալք ընդ հրեշտակս ի յերկինս. որք ունիք զհամարձակութիւն ի Քրիստոսէ, բարեխօսեցէք կեցուցանել զանձինս մեր. զձեզ աղաչեմք:

Կիրակէ:

Միածին Որդի և բանդ Աստուած,

և անմահ էութիւն. որ յանձն ա-
ռեր մարմնանալ ի սրբուհւոյ Ա-
ստուածածնէն և ի միշտ կուսէն.
անփոփոխելիդ մարդ եղեալ խաչե-
ցար Քրիստոս Աստուած. մա-
հուամբդ զմահ կոխեցեր, մինդ ի
սրբոյ Երրորդութենէն փառաւո-
րակից ընդ Հօր և ընդ սրբոյ Հո-
գւոյն. կեցո զմեզ:

Ա ր ե ւ մ ա ն ո ւ կ:

Ցնծա այսօր ցնծա և զուարճացիր
կաթուղիկէ սուրբ՝ յիշատակաւ
սրբոյն Ստեփանոսի նախավկային
Քրիստոսի՝ վկայեցելոյ Հօր. որ ա-
ղօթիւք բանայր զերկինս, զոր փա-
կեաց Ադամ. և հրեշտակակերպ
տեսլեամբ տեսանէր զկերպարանն
Հօր ի կերպի Ադամայ նստեալ յա-
ջոյ փառաց. որ զբազմութիւն
քարանցն որպէս զծաղիկս հաւա-
քելով բոլորէր պսակս փոխանակ

փշոյն և եղեգանն: Եւ զմարտիրո-
սական արիւնն խառնէր ընդ փըր-
կական արեանն Քրիստոսի հոսե-
ցելոյն ի կողէն: Վասն որոյ գե-
րազանցեալ ի փառս առաւել քան
զամենայն սուրբս՝ հայցեա և մեզ
ի վերնաստուղէն զպարգևս կենաց
անվախճանից և զմեծ զորութու-
թիւն:

Ա ր ե ւ մ ա ն ո ւ կ:

Յորովայնէ ընտրեալ՝ սուրբ Ստե-
փանոս, յորովայնէ ընտրեալ՝ սուրբ
Ստեփանոս, վկայ ճշմարիտ առա-
քելական քարոզութեանցն. որ ի
վերայ անօրէն քարաձգողացն աղօ-
թէիր առ Քրիստոս Աստուած՝ մի՛
համարիր սոցա զայս ի մեղս. ի ձե-
ռըն սորին բարեխօսութեանն չնո-
հեա մեզ զմեծ քո զորութիւն:

Ծ ն ն դ ե ա ն:

Աստուածածին անհարսնացեալ,

զԲանն անսկիզբն յղացար, և զԱստուածն անիմանալին ծնար. զան-
պարագրելին ի գիրկս քո բարձեր,
նմա անդադար բարեխօսեա վասն
անձանց մերոց:

ՕՆՆՈՒՆ:

Աստուածածին զքեզ խոստովա-
նեալ երկրպագէ եկեղեցի ուղղա-
փառաց, քանզի ուր քերովբէքն
բազմաչեայք և աթոռք հրանիւթք
և վեցթևեան սերովբէքն նայիլ ոչ
իշխէին, կրեցեր անսերմնապէս յա-
նապականումն ի յարգանդի քում
որպէս աղախին զՏէր, և ծնար որ-
պէս մարդ զԱստուածն բոլորից
զմարմնացեալն առ ի քէն՝ զան-
ճառ զԲանն, ի փրկութիւն աշ-
խարհի և կեանք անձանց մերոց:

ՕՆՆՈՒՆ:

Աղաչեմք զքեզ սուրբ կոյս Մա-

րիամ աստուածածին. Բարձրե-
լոյն զօրութեամբն հովանաւորեալ,
և սուրբ Հոգւոյն եկաւորութեամբն
լուսաւորեալ. որ զամենայն գոյու-
թեանց զստեղծիչն յղացեալ ծնար
անճառապէս. մարմնացելոյն առ
ի քէն բարեխօսեա կեցուցանել
զանձինս մեր:

ԱՆԴՈՒՆ:

Ծերունին այսօր Սիմէոնն՝ Հոգ-
ւովն գայր ի տաճարն, երևելով
քերովբէիցն վեհագոյն. որոց թե-
ւօքն սաւառնեալ ոչ իշխէին նայիլ
ի յահեղ փառացն, սա ի գիրկս
իւր բարձրեալ համբուրէր համար-
ձակապէս, և գգուէր որպէս զմա-
նուկ. և աղերսելով հայցէր ար-
ձակիլ ի խաղաղութիւն:

ՏԵՐՈՆԸՆԴՐԱԿԱՆ:

Անսկզբնական բանդ Աստուած ի

վերջին աւուրս յանձն առեր լինել մարդ ի կուսէն, և արարիչդ յաւիտենից փակեցար ընդ ժամանակաւ, սուրբ Տէր սրբութեանց, և անկարօտ մաքրութեանց. եկիր ի տաճարն քառասնօրեայ զօրինացն կատարեցեր զարդարութիւն. զոր բարձեալ Սիմէոնի զանպատրագրելիդ ի գիրկս իւր՝ հայցէր. որ արձակիչդ ես կապելոց արձակեա զիս ի խաղաղութիւն: Վասն որոյ ընդ ծերունւոյն Սիմէոնի վերագոչեմք առ քեզ Տէր սուրբ՝ սուրբ՝ սուրբ՝ Տէր զօրութեանց. լի են երկինք և երկիր փառօք քո ի փրկութիւն մեզ՝ Քրիստոս Աստուած. փառք քեզ:

Ջօրականաց:

Ջօրական և վկայ ճշմարիտ՝ քաջ նահատակդ Քրիստոսի սուրբդ Թէոդորոս. որ փոխանակեցեր զմարմինդ ընդ հոգւոյդ քումմ փրկանս. և ոչ ածեր զմտաւ զսպառնալիսն Մաքսիմիանոսի թագաւորին. այլ վերին ազդեցութեամբն՝ դիտելով զայրեցուին հոգւոց նոցա, վասն այնորիկ լուցեր զառաջս կռոց նոցա: Աղդ ի յաղթող պատերազմի ոսոխողացս զօր նահատակութեան քոյ՝ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց:

Քառասնեան Հանկանց Մարտիրոսաց:

Գնալով փառաց քոց ի փառս կամուտիկէ եկեղեցի, դիմեալք ի Սերաստիա վերին ուր թագաւորեալքն Աստուծոյ նահատակին ի յամօթ և ի քարբնկէց յերեսս բանսարկուին. քաջալերելով զմիմեանս, զի մի լուծեալ ոք բազանեօք անցաւորիս՝ պակասեսցի. այլ դողալով առաքինաբար զինքն ըղերձեալ, յանիւս աստուածային

գանձուցն հոլովիցի՝ աղաղակելով առ Քրիստոս, ընկալ զորգեգրութիւն ժողովոյս մերոյ ի յոյս սիրողաց քոց. Տէր փառք քեզ։

Ղ՟ազարու։

Զղազարու զննջումն որպէս կանխագէտ յառաջ ասէիր. զի և ի Բեթանիայ յառաջէիր, զի յարուսցես զսիրելին քո, և քեզ գոչելով ասեմք՝ օրհնեալ որ գաս ի չարչարանս կամաւ Հօր ի փրկութիւն անձանց մերոց։

Ղ՟ազարու։

Յորժամ եկեալ կենարարն ի գերեզմանն Ղազարու, յորժամ եկեալ կենարարն ի գերեզմանն Ղազարու՝ աւետաւոր ձայնիւ աղաղակէր ասելով. Ղազարէ արի եկ արտաքս։

Իսկ մեռեալն ի գերեզմանէն յարեաւ, և նոյն ինքն զանմահութեան պարգևսն ետ սիրելւոյն. և աստուածային ձայնիւն ի գերեզմանէն կոչեաց. վասն որոյ և մանկունք եբրայեցւոց՝ ոստովք օրհնէին զանմահ թագաւորութիւն քո. ովսաննա օրհնեալ է գալուստ քո՝ օրհնութիւն ի բարձունս օրհնեալ որ գալոցդ ես անուամբ Տեառն։

Ծ՟աղկազարդեն։

Ցնծա երուսաղէմ, և զարդարեա զառագաստ քո Սիովն. քանզի ահա թագաւոր քո Քրիստոս նստեալ ի յաւանակի նորոյ հեզութիւն ցուցանելով և գայ մտանէ յառագաստ քո Սիովն, և մեք աղաղակեմք՝ ովսաննա օրհնեալ եկեալ յանուն Տեառն. որ ունի զմեծ զողորմութիւն։

Չարկէն։

Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, և յարութեամբ իւրով մեզ կեանս պարգևեաց. նմա փառք յաւիտեանս. ամէն։

Յինանդն։

Ահաւոր և սքանչելի է խորհուրդ փրկութեան մերոյ. որ անընդկիզբն ի Հօրէ անճառաբար մարմնացաւ ի կուսէն, խաչի համբերելով, և կամաւոր մահուամբ իւրով զկենդանութեան մեզ պարգևեաց չնորհս։

Յինանդն։

Բանզի յարեաւ ի մեռելոց Քրիստոս Աստուած յաւիտենից արարիչ, և յարութիւն ազգի մարդկան.

զոր օրհնեն անդադար զինուորութիւնք հրեշտակաց, և ամենայն զուարթունք երկնից, ընդ որս գոչելով ասեմք. փառք սոսկալի յարութեան քո Տէր։

Համբարձման։

Հիացան վերնական բազմութիւնքն տեսանելով զքեզ ի հրեղէն կառս բազմեալ՝ սարսեալ ասէին, ո՞վ է սա՝ որ գիմեալ գայ յԵդովմայ, և եկեալ մտանէ փառօք ի փառս. Տէր փառք քեզ։

Համբարձման։

Որ յանապատում յաթոռ նստիս՝ և յանմարմնից վերօրհնիս, անհասանելի բանդ Աստուած, ի յերկրի երևեցար ճշմարիտ մարդ. զբնօրէնութեանն կատարեալ զհօրհուրդ՝ խաչի և մահու համբերեցեր,

և զհրաշալի գյարուԹիւնդ քո ցու-
ցեր հզօր զօրուԹեամբ. այսօր համ-
բարձար փառօք ի յերկինս, և ըզ-
կուսածին զմարմինդ քո հրաշափա-
ռապէս լուսազարդեցեր. զոր տե-
սեալ Եսայիաս՝ նախաձայնեալ ա-
սէր, ո՞վ է սա որ գիմեալ գայ յեր-
կրէ հիացեալ պետուԹեանց եր-
կնից՝ գոչէին առ միմեանս. համ-
բարձէք իշխանք զդրունս ձեր ի
վեր, և մտցէ Թագաւոր փառաց:
Այլ որ յամենայնի կարօղ ես՝ և
հզօր, չնորհեա և մեզ հանդիպել
քեզ ամպովք ի միւսանգամ քո
գալստեանդ. որ միայնդ ես մար-
դասէր:

Հոգեոյ գալստեան:

Աստուած զքեզ խոստովանիմք
զսուրբ Հոգիդ՝ և երկիր պագա-
նեմք որ ես պատճառ կենդանու-
Թեան եղելոցս՝ և խաղաղարար աշ-

խարհի. որ զագիտուԹիւն աշա-
կերտացն բազում գիտուԹեամբ
լցեր. և ի հրեղէն լեզուս բաժա-
նեալ անճառելեօք ցուցար նոցա.
աղաղակեմք Տէր, խնայեա և կեցո
զմեզ:

Երկոքեան:

Այսօր ի հրեղէն լեզուս բաժա-
նեալ հանգեար յառաքեալսն լու-
սաւորելով գնոսա. և այժմ աղա-
չեմք զքեզ սուրբ Աստուած՝ որ ես
պատճառ կենդանուԹեան եղելոցս
և խաղաղարար աշխարհի, խնա-
յեա և կեցո զմեզ:

Երեքեան:

Վասն որոյ և մեք զՀոգին սուրբ
ընդ Հօր միաւորեալ, և ընդ Որդ-
ւոյ միասնական խոստովանիմք. և
հայցեմք ի վերնատուղէդ մեզ
զհոգևորական զնաղաղուԹիւնդ.
Տէր փառք քեզ:

Հրճիճեանց։

Որք ծագեցան մեզ յարևմտից որպէս զարեգակն. և լուսաւորեցին համանգամայն զաշխարհս հայոստանեայց, փարատեցին զխաւարն անգիտութեան կամապաշտութեան. և լուսաւորեցին զամենայն հոգի հաւատով յաստուածգիտութեան. սոցա բարեխօսութեամբն Քրիստոս Աստուած, պարգևեսա աշխարհի քում զխաղաղութիւն, և անձանց մերոց զմեղաց զթողութիւն որպէս մարգասէր Տէր։

Գ.այեանեանց։

Զյաղթական զձեր զհանդէս զըւարճացեալ ոծնէ եկեղեցի սուրբ. քանզի սրբութիւն ստացայք զկուսութեան. և ի մարմնի զանմարմնոցն ցուցէք զհանդէս։

Կոստանեանց։

Հարսնացեալք Քրիստոսի երկնաւոր փեսայի, դառերք վերին Սիովնի. խնդրեցէք ի Քրիստոսէ զհաստութիւն և զմեծ զողորմութիւն։

Յովհաննու Մկրտչէ։

Զյաոաջընթացութիւն քո և զկատարեալութիւն Աստուծոյ բանին խափանել կարծելով, որ ի ձեռն կնոջն զնախաստեղծն ի դրախտէն արտաքս ընկէց, նաև այժմ զՀերովդիադայ անօրէնութեամբ բորբոքեալ, և բազմելոցն Հերովդիայ՝ զկաքաւս ոտից աղջկանն հաճոյացոյց, զի զքոյդ հատցէ զգլուխ, որ զամենեցուն ձեռնադրեցեր զգլուխըն զՔրիստոս։ Այլ դու որ յանապատէ բարբառոյ ձայն, գոչեա ոբում ձեռնադրեցեր՝ պարգևել զխաղաղութիւն և զմեծ զողորմութիւն։

Մաքսաբեխց։

Տէր որ հիմնեցուցեր զեկեղեցի քո ի վերայ վիմին հաւատով, և կարգեցեր ի սմա առաքեալս՝ և մարգարէս. հովիւս և վարդապետս առ ի հաստատութիւն սրբոց. և ճգնութեամբ վկայից զմ ընդնամին սորա վանեցեր. ի խաղաղութեան զսա պահեա Աստուած որպէս մարգասէր։

Ա՜ա՜ելոց։

Առաքեալք և վկայք Քրիստոսի Աստուծոյ ամենակալ Հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդհանուր յորդեգրութիւն կենաց կոչեցան՝ միաբնական սուրբ երրորդութեանն յորդորեցին երգել փառս ի յաւիտեանս. ամէն։

Հայրապետական։

Զհայրապետականն զարդարեցեր

զաթոռ ի յերկրի. առաքելական առեր զպատիւ յերկնուստ՝ ծառայ Քրիստոսի ով երանելիդ ի հարս սուրբ հայրապետ. քանզի քոյ վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով, և հաւատացելոցս զփրկութիւն չնորհելով. վասն որոյ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց։

Եկեղեցւոյ։

Զխաղաղութիւն չնորհեա եկեղեցւոյ քում սրբոյ, զխաղաղութիւն և զանչարժութիւն ի թշնամեաց պատերազմէ. և հաստատեա ի մի հաւատ զկաթուղիկէ եկեղեցի. զքեզ խոստովանիմք Տէր և Աստուած՝ կեցո զմեզ։

Վարդավառին։

Երևի տէր այսօր աշակերտացն ի

թաբօրական լերինն. և աշակերտացն զարհուրեալ աղաղակէին առ սէլով, արասցուք երիս տաղաւարս. մի Տեառն, և մի Մովսեսի, և մի Եղիայի: Եւ մեք բանաւոր հօտքս երգեմք ընդ քո ճշմարիտ վկայիդ. առաքեա ի մեզ զլոյս քո չնորհացդ ի քոյ միւսանգամ գալստեանդ և կեցո:

Խաչէ:

Առաջի պատուական ամենայաղթ խաչի քո անկանիմք երկրպագելով և խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց. քանզի սուաւ բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան: Եւ այժմ վասն սրբոյ աստուածային քոյ նշանի՝ չնորհեա զերկնային զխաղաղութիւնդ ամենայն աշխարհի:

Ողջոյն սրտոման:

Այսօր ահաւոր ձայնք որոտման հնչեցին յերկնից ի յերկիր կոչեալ յորդեգրութիւն զձեզ որդիք Միմոնի. հաստատութիւն հաւատոյ, և պարծանք եկեղեցւոյ. որք ցօղով արեան ձերոյ՝ մաքրեցիք զգաթիզերս յանօրէն կռապաշտութեանց: Այդ հայցեցեք ի Քրիստոսէ զքաւութիւն ասղաց ձերոյ. մաղթանօք սոցա Տէր խնայեա ի փրկեալ քո ժողովուրդս, որ միայնդ ես մարդասէր:

Հրեշտակաց:

Ջոր օրհնեն անլռելի ձայնիւ իմանալի զօրութիւնք, երկնաւոր նահապետութիւնք հրեշտակք և հրեշտակապետք, աթոռք և եէրութիւնք, իշխանութիւնք և պետութիւնք, և սերովբէք և քերովբէք զամենասուրբ զերրորդութիւնն, և զմի Աստուածութիւն:

Հրեշտակաց։

Այսօր երկրաւորս եկեղեցւոյ քահանայապետութիւն ցնծայ հրաշափառապէս՝ զերկնաւոր քահանայապետութեանդն կատարելով զգոծնախմբութեան ծոնս, անմարմնական գաստուց հոգեղինացդ՝մարմնականքս և հողեղէնքս, ով սուրբ Գաբրիէլ և Միքայէլ մեծք, հրեշտակապետք բարձրելոյն, որք կայք առաջի աթոռոյ աստուածութեանդն. անդադար բարեխոս լերուք վասն մեր առ Տէր, վերաբերել զամենեսեան ընդ ձեզ յերկնից արքայութիւնն, և միաձայն բարբառով երգել զփառս։

Գրիգոր լուսաւորչին։

Գրիգոր սուրբ քահանայապետ՝ որ զհաւատս ուսուցեր և զբանակս դիւացն հալածեցեր. մարգկան ուսուցեր քարոզել զերկրորդութիւնըն. պսակեցար յարքայութեան. արդ բարեխոս լեր առ Տէր վասն մեր։

Երէց հանկանոց։

Որ ի վերայ քերովբէիցն հանգչիս. և ի զօրացն հրեղինաց օրհնաբանիս, իշեր ի Բաբելոն և փըրկեցեր զերիս մանկունսն ի հրոյն բռնութենէ. որք ազաղակելով գոչէին երգ նոր, ամենայն գործք օրհնեցէք և բարձր արարէք։ Թագաւոր փառաց Քրիստոս և արարիչ բոլորից. որ մարդասիրապէս գթացար ի սուրբ մանկունսն, փրկեցեր ի բորբոքեալ բոցոյն. որք անարգեցին զբռնութիւն թագաւորին, և չիշխացին զզօրութիւն հրոյն, ընդ նոսին և մեք քեզ վերսագոչեմք, փրկեա զմեզ ի հրոյն յաւիտենից։ Զի դու միայն ես բազմագութ Տէր քեզ փառք յաւիտեանս. ամէն։

ՃԱՇՈՒ ՍԱՂՄՈՍՔ

Ա.ՓՈՓԱԳԱՆՔ։

Տէր տացէ զբան ոյք աւետարանեն զօրութեամբ բազմաւ։
Յարիցէ Աստուած և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա. փա-
խիցեն ատելիք նորա յերեսաց նորա։
Որպէս պակասէ ծուխ պակասես-
ցին, որպէս հալի մոմ առաջի
հրոյ՝ այնպէս կորիցեն մեղաւորք
յերեսաց Աստուծոյ։

Ծննդեան. Ա.ՓՈՓԱԳԱՆՔ։

Մեծացուսցէ անձն իմ զՏէր, և
ցնծասցէ հոգի իմ Աստուծով
փրկչաւ իմով։
Զի հայեցաւ ի խոնարհութիւն ա-

ղախնոյ իւրոյ, զի ահա յայսմ
հետէ երանեսցեն ինձ ամենայն
ազգք։
Զի արար ինձ մեծամեծս հզօրն և
սուրբ է անուն նորա։

Ծննդեան։

Ա. Տէր ասաց ցիս որդի իմ ես
դու, և ես այսօր ծնայ զքեզ։
Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք և
ժողովուրդք խորհեցան ի սնո-
տիս։
Յանդիման եղեն թագաւորք եր-
կրի, և իշխանք ժողովեցան ի
միասին վասն Տեառն և վասն
օծելոյ նորա։
Բ. Տէր որպէս զինու հաճութեամբ
քով պսակեցեր զնոսա։
Բանիւ իմոց ունկն դիր Տէր և ի
միտ առ զաղաղակ իմ։
Գ. Տէր ասաց ցիս որդի իմ ես
դու և ես այսօր ծնայ զքեզ։
Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք և

ժողովուրդք խորհեցան ի սնոտիս:

Դ. Ի վայելչութիւն սրբոց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ գքեզ:

Աստ Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց:

Ե. Բարձր արարէք զտէր Աստուած մեր, երկիր պագէք պատուանդանի ոտից նորա զի սուրբ է:

Տէր թագաւորեաց բարկացան ժողովուրդք որ նստիս ի քրովբէս, սասանեցաւ երկիր:

Զ. Տէր հաներ ի դժոխոց զանձն իմ. և փրկեցեր զիս յայնցանէ՝ որ իջանեն ի գուբ:

Բարձր առնեմ գքեզ Տէր՝ զի ընկալար զիս, և ոչ ուրախ արարեր զթշնամիս իմ յիս:

Տէր Աստուած իմ կարդացի առքեզ և բժշկեցեր զիս. Տէր հաներ ի դժոխոց զանձն իմ. և փրկեցեր

զիս յայնցանէ՝ որ իջանեն ի գուբ:

Է. Աւետարանեցէք օր ըստ օրէ զփրկութիւն նորա:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր, օրհնեցէք զՏէր ամենայն երկիր:

Ը. Եցոյց Տէր զփրկութիւն իւր՝ առաջի ազգաց յայտնեաց զարդարութիւն իւր:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր՝ զի սքանչելիս արար:

Փրկեաց զնա աջ իւր և բազուկ սուրբ իւր:

Ա՚՚՚Ե:

Եթէ ոչ Տէր էր առ մեզ ասասցէ Իսրայէլ, եթէ ոչ Տէր էր առ մեզ:

Ընդ յառնել մարդկան ի վերայ մեր կենդանւոյն կամեցան կլանել զմեզ:

Բարկանալ սրտմտութեամբ նոցա

ի վերայ մեր, ապա և ջուրք ուռեմն ընկղմուզանէին զմեզ:

Տէառն ընդառաջին:

Տէր ի տաճար սուրբ իւրում Տէր յերկինս յաթոռ իւրում:
Ի Տէր յուսացայ որպէս ասիցէք ցանձն իմ փոփոխեաց ի լերինս որպէս ճնճղուկ:
Զի ահա մեղաւորք լարեցին զաղեղունս իւրեանց, պատրաստ արարին զնետս ի կապարճս, ձգել ընդ խաւար այնոցիկ ոյք ուղիղ են սրտիւք:

Աչուհայէց և այլ կէրպկէէց:

Թեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիովն և քեզ տացին աղօթք յերուսաղէմ:
Լուր աղօթից իմոց զի առ մեզ ամենայն մարմին եկեսցէ:

Բանք անօրինաց զօրացան ի վերայ մեր. զամբարչտութիւնս մեր դու քաւեսցես:

Մենեխէ:

Ուխտս դիք և կատարեցէք տեառն Աստուծոյ մերոյ ամենեքեան որ չուրջ էք զնովաւ:
Յայտնի է ի Հրէաստանի Աստուած. և յիսրայէլ մեծ է անուն նորա:

Պաղբու:

Տէր հաներ ի դժոխոց զանձն իմ. և փրկեցեր զիս յայնցանէ՝ որ ի Ջանեն ի գուբ:
Բարձր առնեմ զքեզ Տէր զի ընկալար զիս, և ոչ ուրախ արարեր զթշնամիս իմ յիս:
Տէր Աստուած իմ կարդացի առ քեզ և բժշկեցեր զիս. Տէր հաներ ի դժոխոց զանձն իմ, և փըր-

կեցեր զիս յայնցանէ՝ որ իջանեն
ի գուբ։

Ծաղկազարդէ։

Լերինք ցնծասցեն առաջի Տեառն,
զի գայ և հաստեալ է Տէր ի դա-
տել զերկիր։
Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր
զի սքանչելիս արար։
Փրկեաց զնա աջ իւր եւ բազուկ
սուրբ իւր։

Ա՜ոտ Հինգշաբթի։

Պատրաստ արարեր առաջի իմ սե-
ղան ակն յանդիման նեղչաց ի-
մոց։
Տէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ
պակասեսցէ։
Ի վայրի դալարուոջ՝ անդ բնակե-
ցոյց զիս, և առ չուրս հանգըս-
տեան սնոյց զիս։

Չաթթի։

Երանեալ է այր որ ոչ գնաց ի
խորհուրդս ամբարշտաց. ի ճա-
նապարհի մեղաւորաց նա ոչ
եկաց, և յաթոռս ժանտից նա
ոչ նստաւ։
Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք, և
ժողովուրդք խորհեցան ի սնո-
տիս։
Տէր զի՞ բազում եղեն նեղիչք իմ.
և բազումք յարեան ի վերայ իմ։
Բշ. Ի կարդալ իմում լուար ինձ
Աստուած ըստ արդարութեան,
ի նեղութեան ինձ անդորր ա-
րարեր. ողորմեա ինձ և լուր ա-
ղօթից իմոց։
Բանից իմոց ունկն դիր Տէր, և
ի միտ առ զաղաղակ իմ։
Տէր մի՛ սրամտութեամբ քով յան-
դիմաներ զիս. և մի՛ բարկու-
թեամբ քով խրատեր զիս։

ԴՇ. Տէր Աստուած իմ ի քեզ յուսացայ, փրկեա զիս. և յամենայն հալածչաց իմոց ապրեցո զիս:

Տէր Տէր մեր, զի՞ սքանչելի է անունդ ի վերայ ամենայն երկրի:

Գոհացայց զքէն Տէր բոլորով սրտիւ իմով. պատմեցից զամենայն սքանչելիս քո:

ԴՇ. Ի Տէր յուսացայ. որպէս ասիցէք ցանձն իմ. փոփոխեաց ի լերինս որպէս ճնճղուկ:

Ապրեցո զիս Տէր՝ զի նուաղեաց սուրբ. նուաղեցին ճշմարտութիւնք յորդւոց ի մարդկանէ:

Մինչև յե՞րբ Տէր՝ մոռանաս զիս ի սպառ մինչև յե՞րբ դարձուցաս նես զերեսս քո յինէն:

ԵՇ. Ասաց անզգամն ի սրտի իւրում, թէ ոչ գոյ Աստուած:

Տէր ո՞վ կացցէ ի խորանի քում. կամ ո՞վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո:

Պահեա զիս Աստուած իմ, զի ես ի

քեզ յուսացայ ասացի Տեառն, Տէր իմ ես դու՝ և բարիք իմ ինձ ի քէն են:

ՈՒՐ. Լուր Տէր արդարութեան, և նայեա ի խնդրուածս իմ. ունկըն դիր աղօթից իմոց՝ զի ոչ չրթամբք նենգաւորաց:

Սիրեցից զքեզ Տէր զօրութիւն իմ. Տէր հաստատիչ իմ, ապաւէն իմ՝ և փրկիչ իմ:

Երկինք պատմեն զփառս Աստուծոյ, և զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն:

ՇԱԲ. Լուիցէ քեզ Տէր յաւուր անձկութեան, օգնական եղիցի քեզ անուն Աստուծոյ Յակոբայ:

Տէր ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ:

Աստուած Աստուած իմ՝ նայեաց առ իս. ընդե՞ր թողեր զիս. հեռի եղէ ի փրկութենէ իմմէ վասն բանից յանցանաց իմոց:

Ն՞ր կէրթայ։

Տէր հովուեսցէ զիս. և ինձ ինչ ոչ պակասեսցի։

Տեառն է երկիր լրիւ իւրով. աշխարհ և ամենայն բնակիչք նորա։

